# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

## ՈՐՈՇՈՒՄ

14 ապրիլի 2017թ. № **19-Ա**

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 14-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Սպիտակ համայնքի 2017 բյուջեի 1-ին եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունելու մասին
2. Սպիտակ համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու և Սպիտակ համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 52-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
3. Սպիտակ համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին
4. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու մասին
5. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը վարձակալության տրամադրելուն համաձայնություն տալու մասին
6. Սպիտակ համայնքի Էստոնական թաղամաս, թիվ 4 շենք, թիվ 8 հասցեի բնակարանը սեփականության իրավունքով Գեորգի Ջալալի Ղազարյանի ընտանիքին նվիրատվությամբ փոխանցելուն համաձայնություն տալու մասին

ԿՈՂՄ (8) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՄՅԱՆ
ՄԱՆՎԵԼ ԽՈՅԵՑՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ԿԱՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐՈՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ
ԳԱՐԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. ապրիլի 14
ք. Սպիտակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«_14_» ապրիլի 2017թ. № **20-Ն**

### ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ներկայացված Սպիտակ համայնքի 2017 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման մասին համայնքի ղեկավարի հաղորդումը, Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Ընդունել ի գիտություն Սպիտակ համայնքի 2017 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման մասին Սպիտակի համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

ԿՈՂՄ (8) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՄՅԱՆ
ՄԱՆՎԵԼ ԽՈՅԵՑՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ԿԱՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐՈՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ
ԳԱՐԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. ապրիլի _14_
ք. Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ավագանու
„14" ապրիլի 2017թ.
թիվ 20-Ն որոշման

# Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ

## 2017թ. 1-ի եռամսյակի դրությամբ Սպիտակ համայնքի բյուջեի կատարման ընթացքի մասին

Սպիտակ համայնքի 2017թ. բյուջեն 1-ի եռամսյակի կտրվածքով կատարվել է.

ա) Եկամուտների գծով 102.95 տոկոսով, նախատեսված 84773.8 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 87272.8 հազար դրամ:

-Սեփական եկամուտները (հարկեր և տուրքեր, այլ եկամուտներ, մուտքեր հիմնական միջոցների իրացումից) նախատեսված 21953.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 24852.2 դրամ կամ բյուջեն սեփական եկամուտների գծով կատարվել է 113.2 տոկոսով:

-Տեղական ինքնակառավարման մարմիններին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ՔԿԱԳ –ի ծախսերի ֆինանսավորման համար նախատեսված 975.2 հազար դրամի դիմաց հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվել է 1071.4 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 109.87 տոկոս:

-Պաշտոնական դրամաշնորհների գծով եկամուտները նախատեսված 61 845.6 հազար դրամի դիմաց կազմել են 61 359.2 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 99.21 տոկոս, որից 980.0 հազար դրամը նախատեսված սուբվենցիա է նպատակաուղղված երաժշտական դպրոցներում ազգային,փողային և լարային նվագարանների գծով ուսուցման համար:

-Տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 18 281.4 հազար դրամ:

բ) Ծախսերի գծով բյուջեն կատարվել է 72,81 տոկոսով, նախատեսված 97968,2 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախսերը կազմել են 71 326,8 հազար դրամ:

1. <u>Վարչական բյուջեի եկամուտներ</u>

Վարչական բյուջեի եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 84 773,8 հազար դրամի դիմաց կազմել են 87 097,8 հազ. դրամ, կամ կատարողականը կազմել է 102.75 տոկոս:

1) ՏԻՄ-ին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար ստացվող միջոցները նախատեսված 975.2 հազար դրամի դիմաց հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվել է 1071.4 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 109.87 տոկոս։։

2) Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհների /դոտացիա/ գծով եկամուտները նախատեսված 60 379.2 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 60 379.2 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 100 տոկոս։

3) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) նախատեսված 980.0 հազար դրամի դիմաց հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվել է 980.0 հազար դրամ, կամ ֆինանսավորումը կատարվել է 103 տոկոսով։

4) Վարչական մասի սեփական եկամուտները (հարկեր և տուրքեր, այլ եկամուտներ) նախատեսված 21 953.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 24 667.2 հազար դրամ կամ կատարվել են 112.37 տոկոսով, որից

**ա . Հողի հարկ**

Հողի հարկի գծով եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 1050.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 1 081.64 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 103 տոկոս։

**բ . Գույքահարկ**

Գույքահարկի գծով եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 7 300.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 11 373.7 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 155.8 տոկոս, այդ թվում՝

Գույքահարկ շենք - շինությունների համար նախատեսված 600.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 1 827.2 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 304.5 տոկոս։

Գույքահարկ փոխադրամիջոցների համար նախատեսված 6 700.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 9 546.5 հազար դրամ, կամ կատարողականը կազմել է 142.6 տոկոս։

**գ.Պետական տուրքեր**

Պետական տուրքերի գծով եկամուտները բյուջեով նախատեսված 1 420.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 1 481.6 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 104.3 տոկոս, այդ թվում՝

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար, նախատեսված 800.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 868.0 հազար դրամ, կատարողականը կազմում է 108.5 տոկոս։

Նոտարական գործողությունների համար, նախատեսված 620.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 613.6 հազար դրամ կատարողականը կազմում է 98.97 տոկոս։

**դ. Տեղական տուրքեր**

Տեղական տուրքերի գծով եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 2 429.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 1 834.5 հազար դրամ կամ տեղական տուրքերի գծով բյուջեն կատարվել է 75.5 տոկոսով, այդ թվում՝

- Տեղական տուրք շենքերի, շինությունների շինարարության թույլտվության համար նախատեսված 15.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 45.0 հազար դրամ, կատարողականը կազմում է 300 տոկոս:
- Համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի , իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման թույլտվության համար նախատեսված 382.5 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 112.0 հազար դրամ, կատարողականը կազմում է 29.28 տոկոս:
- Համայնքի տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի իսկ հանրային սննդի օբյեկտներում ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար նախատեսված 375.5 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 137.5 հազար դրամ, կատարողականը կազմում է 36.6 տոկոս:
- Համայնքի տարածքում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար. նախատեսված 750.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 525.3 հազար դրամ կատարողականը կազմում է 70.04 տոկոս:
- Համայնքի տարածքում՝ վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար նախատեսվել է 100.0 հազար դրամ հավաքագրվել է 0 դրամ:
- Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, նախատեսված 690.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 925.2 հազար դրամ, կատարողականը կազմում է 134.1 տոկոս:
- Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թուլտվության համար, նախատեսված 25.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 25.0 հազար դրամ,կատարմանը 100 տոկոս:
- Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թուլտվության համար, նախատեսված 63.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 44.0 հազար դրամ, կատարողականը կազմում է 69.84 տոկոս:
- Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար, նախատեսված 28.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 20.5 հազար դրամ կատարողականը կազմում է 73.2 տոկոս:

է - Այլ եկամուտներ - նախատեսված 9 754.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 8 895.76 հազար դրամ կամ կատարվել են 91.2 տոկոսով: այդ թվում՝

- Գույքի վարձակալություն նախատեսված 1 688.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 1 215.86 հազար դրամ, կատարողականը կազմում է 72.03 տոկոսով: Վարչական գանձումներ (համայնքի կողմից մատուցած ծառայություններ) նախատեսված 8 066.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 7 679.9 հազար դրամ, վարչական գանձումների մասով բյուջեն կատարվել է 95.22 տոկոսով, որից

- աղբահանության վճարներ նախատեսվել էր 3 836.0 հազար դրամ, փոխարենը հավաքագրվել է 4 044.2 հազար դրամ, կատարողականը կազմում է 105.4 տոկոս:

- ծնողական միջոցներ (նախադպրոցական կրթություն՝ մանկապարտեզներ, արտադպրոցական կրթություն՝ երաժշտական և գեղարվեստի դպրոցներ, ) նախատեսվել էր 4 230.0 հազար դրամ, փաստացին կատարվել է 3 466.7 հազար դրամ, կատարողականը կազմում է 81.96 տոկոս:

-Տեղական այլ վճարներ 3 ամսվա համար նախատեսված 0 դրամի դիմաց հավաքագրվել 51.09 հազար դրամ,

Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը՝ 3 778.1 հազար դրամ:

Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմել է 12 644.34 հազար դրամ:

## 2. Ֆոնդային բյուջեի եկամուտներ

Ֆոնդային բյուջեի եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 0 դրամի դիմաց փաստացի կազմել են 175.0 հազար դրամ:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներ չեն եղել:

Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 5 637.1 հազար դրամ:

## 3. Վարչական բյուջեի ծախսեր

Վարչական բյուջեի ծախսերը 3 ամսվա համար նախատեսված 97 968.2 հազար դրամի դիմաց կատարվել են 71 326.8 հազար դրամով կամ կատարողականը կազմել է 72.81 տոկոս:

- Ապարատի պահպանման ծախսեր, վարչական բյուջեի ծախսերը 3 ամսվա համար նախատեսված 28 922.0 հազար դրամի դիմաց կատարվել են 22 202.3 հազար դրամով կամ կատարողականը կազմել է 76.77 տոկոս:

- աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ – 16 770.1 հազար դրամ,
- էներգետիկ ծառայություններ՝ գազի և էլ.էն.վճարներ – 3 504.6 հազար դրամ,

- կապի և փոստային ծառայությունների վճարներ-252.6 հազար դրամ:
- այլ ծառայությունների վճարներ 934.5 հազար դրամ:
- գրասենյակային ապրանքների ձեռք բերում – 200.0 հազար դրամ:
- տրանսպորտային նյութեր՝ վառելիք և պահեստամասեր-525.0 հազար դրամ:
- Պարտադիր վճարներ – 15.5 հազար դրամ:

-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ

Նախատեսված 2 306.5 հազար դրամի դիմաց կատարվել են 1 346.2 հազար դրամ, կատարողականը կազմել է 58.4 տոկոս, որից փաստացի ծախսերը.

- ՔԿԱԳ – 803.6հազար դրամ,
- ուսանողական ավտոբուսի ծախսեր-497.6 հազար դրամ,
- տրանսպորտային ծառայություններ 45.0 հազար դրամ:

2015թ- ի համեմատությամբ պակաս է ծախսվել 437.1 հազար դրամ,

-Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ

Նախատեսված 760.0 հազար դրամի դիմաց կատարվել են 469.5 հազար դրամ, կատարողականը կազմել է 61.78 տոկոս: (Մարզպետարանի և քաղաքային զբոսայգու պահպանման ծառայության վճար 440.0 հազար դրամի, պարտադիր վճարներ /կադաստր/ 29.5 հազար դրամ:

-Շրջակա միջավայրի պաշպանություն

Նախատեսված 10 500.0 հազար դրամի դիմաց ծախսվել է 5 667.2 հազար դրամ, կատարողականը կազմել է 53.97 տոկոս:

Այդ թվում

- աղբահանության՝ ծառայությունների վճարներ 1 298,4 հազար դրամ:
- Սանիտարական մաքրում՝ ծառայությունների վճարներ 2 835,5 հազար դրամ:
- Ձմեռային մաքրում՝ ծառայությունների վճարներ 2 299,2 հազար դրամ:

-Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ

Նախատեսված 5 956.3 հազար դրամի դիմաց կատարվել են 5 540.95 հազար դրամ, կատարողականը կազմել է 93.03 տոկոս, որից

- Փողոցների լուսավորություն-փաստացի ծախսը կազմել է 1 611.95 հազար դրամ ,

Բնակարանների կոմունալ սպասարկում ԲՍԳ ՀՈԱԿ նախատեսված 3 859.0 հազար դրամի դիմաց կատարվել են 3 859.0 հազար դրամ,

-Թափառող կենդանիների վնասազերծում նախատեսվել է 70,0 հազար դրամ, փաստացի ծախսը կազմել է 70.0 հազար դրամ:

-Հանգիստ, մշակույթ և կրոն (<<Սպիտակի քաղաքային գրադարան>> ՀՈԱԿ, <<Սպիտակի մշակույթի տուն>> ՀՈԱԿ, սպորտային և այլ մշակութային միջոցառումներ) նախատեսված 10 822.1 հազար դրամի դիմաց կատարվել են 9 485.3 հազար դրամ, կատարողականը կազմել է 87.65 տոկոս:

2 689.0 հազար դրամ տրամադրվել է համաքաղաքային միջոցառումների կազմակերպելու համար՝ բանակի օր, առաջին զորակոչ, մարտի 8, ապրիլի 7 :

<<Սպիտակի քաղաքային գրադարան>> նախատեսվել է 4 271.8 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 3 937.6 հազար դրամ, կատարողականը կազմել է 92.2 տոկոս

<<Սպիտակի մշակույթի տուն>> նախատեսվել է 3 180.3 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 2 858.6 հազար դրամ, կատարողականը կազմել է 89.9 տոկոս:

-Կրթություն- նախատեսված 113 016,4 հազար դրամի դիմաց փաստացի ծախսվել է 26 555.3 հազար դրամ, նախատեսվածից պակաս է ծախսվել 1 786,8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 98,4 տոկոս, այդ թվում

Նախադպրոցական կրթություն- 56 365,2 հազար դրամ, որից

<<թիվ-1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ բաղկացած 2 խմբից , նախատեսվել է 4 167.2 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 2 893.1 հազար դրամ, կամ կատարողականը կազմել է 69.4 տոկոս:

<<թիվ-2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ բաղկացած 6 խմբից, նախատեսվել է 9 967.8 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 9 967.8 հազար դրամ, կատարողականը կազմել է 100 տոկոս:

-Արտադպրոցական կրթություն –նախատեսվել է 14 100,7 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 13 460,3 հազար դրամ, կատարողականը կազմել է 95,46 տոկոս՝ որից

<<Երաժշտական դպրոց>>ՀՈԱԿ-2016թ-ի համար նախատեսվել է 5386,7 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 5 316,95 հազար դրամ, կատարողականը կազմել է 98,7 տոկոս:

<<Գեղարվեստի դպրոց>> նախատեսվել է 2 500,5 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 2 500,5 հազար դրամ, կատարողականը կազմել է 100 տոկոս:

<<Մանկապատանեկան մարզադպրոց>> նախատեսվել է 5 979.5 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 5 642.9 հազար դրամ, կամ կատարողականը կազմել է 94.4 տոկոս:

Միջնակարգ կրթություն <<Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում կրթության հավասար հնարավորության ապահովում ծրագրի շրջանակներում նախադպրոցական կրթության խումբ է բացվել թիվ 3 հիմնական դպրոցում <<Կրթական ծրագրերի կենտրոն >> ծրագրերի իրականացման գրասենյակի հետ կնքված դրամաշնորհային պայմանագրի շրջանակներում համայնքի բյուջեից ներ է դրվել 1 139.4 հազար դրամ, ծրագրի ընդհանուր արժեքը 7 369, 9 հազար դրամ է: Ծրագիրը շարունակական է , 2017թ –ին համայնքի բյուջեից ներ է դրվել ևս 234,0 հազար դրամ:

-Սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերը նախատեսված 5 661 հազար դրամի դիմաց կատարվել են 60,0 հազար դրամ:

2016թվականի բյուջեի կատարման արդյունքում առաջացած 12 644.34 հազար դրամ պարտքից վարչական մասով 3 ամսում մարվել է 4 117.44 հազար դրամը կամ կատարվել է 32.57 տոկոսով:

## 4. Ֆոնդային բյուջեի ծախսեր

Ֆոնդային բյուջեով 3 ամսվա համար նախատեսվել են 5 637.1 հազար դրամի ծախսեր, դրամարկղային ծախսը կազմել է 56.0 հազար դրամ:

Առ 01.04.17թ. դրությամբ բյուջեի պարտքը կազմում է 8 507.9 հազար դրամ (վարչական մասով՝ 8 507.9 հազար դրամ, ֆոնդային մասով 0 դրամ), որից

- ապարատի պահպանման ծախսեր 4 267.9 հազար դրամ:
- ՀՈԱԿ-ների սուբսիդավորման գծով 2940.3 հազար դրամ:
- քաղաքային տնտեսության և այլ ծախսերի գծով 1 299.7հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Հ. ՄԻՐԶՈՅԱՆ

# Հաշվետվություն

## Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ

## (02/01/17 - 31/03/17թ. ժամանակահատվածի համար)

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդվածի համար | Տարեկան հաստատված պլան Ընդամենը (ս.5+ս.6) | Տարեկան հաստատված պլան այդ թվում վարչական մաս | Տարեկան հաստատված պլան այդ թվում ֆոնդային մաս | Տարեկան ճշտված պլան Ընդամենը (ս.8+ս.9) | Տարեկան ճշտված պլան այդ թվում վարչական բյուջե | Տարեկան ճշտված պլան այդ թվում ֆոնդային բյուջե | Փաստացի Ընդամենը (ս.11+ս.12) | Փաստացի այդ թվում վարչական բյուջե | Փաստացի այդ թվում ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300) այդ թվում՝ | | 357 613 900 | 357 613 900 | 0 | 357 613 900 | 357 613 900 | 0 | 87 097 827 | 87 097 827 | 0 |
| 1100 | 1.ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160) այդ թվում՝ | 7100 | 63 766 600 | 63 766 600 | X | 63 766 600 | 63 766 600 | X | 15 771 415 | 15 771 415 | X |
| 1110 | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112) այդ թվում՝ | 7131 | 7 820 600 | 7 820 600 | X | 7 820 600 | 7 820 600 | X | 2 908 833 | 2 908 833 | X |
| 1111 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | | 3 620 600 | 3 620 600 | X | 3 620 600 | 3 620 600 | X | 1 827 196 | 1 827 196 | X |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | | 4 200 000 | 4 200 000 | X | 4 200 000 | 4 200 000 | X | 1 081 637 | 1 081 637 | X |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից այդ թվում՝ | 7136 | 41 760 000 | 41 760 000 | X | 41 760 000 | 41 760 000 | X | 9 546 472 | 9 546 472 | X |
| 1121 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | | 41 760 000 | 41 760 000 | X | 41 760 000 | 41 760 000 | X | 9 546 472 | 9 546 472 | X |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1130 | 1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ այդ թվում` | 7145 | 7 986 000 | 7 986 000 | X | 7 986 000 | 7 986 000 | X | 1 834 510 | 1 834 510 | X |
| 1131 | Տեղական տուրքեր (տող 1132 + տող 1137 + տող 1139 + տող 1140 + տող 1142 + տող 1143 + տող 1144+տող 1145+ տող 1147) այդ թվում` | 71452 | 7 986 000 | 7 986 000 | X | 7 986 000 | 7 986 000 | X | 1 834 510 | 1 834 510 | X |
| 1132 | ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար | | 180 000 | 180 000 | X | 180 000 | 180 000 | X | 45 000 | 45 000 | X |
| 1137 | դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում` ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար | | 3 032 000 | 3 032 000 | X | 3 032 000 | 3 032 000 | X | 249 500 | 249 500 | X |
| 1139 | զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար | | 1 500 000 | 1 500 000 | X | 1 500 000 | 1 500 000 | X | 525 300 | 525 300 | X |
| 1140 | է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար | | 212 000 | 212 000 | X | 212 000 | 212 000 | X | 20 500 | 20 500 | X |
| 1142 | թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար | | 2 760 000 | 2 760 000 | X | 2 760 000 | 2 760 000 | X | 925 210 | 925 210 | X |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1145 | ժբ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար | | 50 000 | 50 000 | X | 50 000 | 50 000 | X | 25 000 | 25 000 |
| 1147 | ժդ) Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար | | 252 000 | 252 000 | X | 252 000 | 252 000 | X | 44 000 | 44 000 |
| 1160 | 1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ այդ թվում` | 7146 | 6 200 000 | 6 200 000 | X | 6 200 000 | 6 200 000 | X | 1 481 600 | 1 481 600 |
| 1161 | Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր (տող 1162 + տող 1163 ) այդ թվում` | | 6 200 000 | 6 200 000 | X | 6 200 000 | 6 200 000 | X | 1 481 600 | 1 481 600 |
| 1162 | ա) Քաղաքաց. կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկն. վկայական-, քաղաքացի. կացության ակտերում կատարված գրառում-ում փոփոխություն-ը, լրացում., ուղղումներ կատարելու և վերականգ. կապակցությամբ վկայական-ը տալու համար | | 3 700 000 | 3 700 000 | X | 3 700 000 | 3 700 000 | X | 868 000 | 868 000 |
| 1163 | բ) Նոտար. գրասենյակների կողմից նոտար. ծառայություն. կատարելու, նոտար. կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար | | 2 500 000 | 2 500 000 | X | 2 500 000 | 2 500 000 | X | 613 600 | 613 600 |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260) այդ թվում` | 7300 | 247 382 000 | 247 382 000 | 0 | 247 382 000 | 247 382 000 | 0 | 61 359 200 | 61 359 200 |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ` ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258) որից` | 7331 | 247 382 000 | 247 382 000 | X | 247 382 000 | 247 382 000 | X | 61 359 200 | 61 359 200 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1251 | ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | | 241 516 800 | 241 516 800 | X | 241 516 800 | 241 516 800 | X | 60 379 200 | 60 379 200 | X |
| 1257 | գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 5 865 200 | 5 865 200 | X | 5 865 200 | 5 865 200 | X | 980 000 | 980 000 | X |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390) այդ թվում՝ | 7400 | 46 465 300 | 46 465 300 | 0 | 46 465 300 | 46 465 300 | 0 | 9 967 212 | 9 967 212 | 0 |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334) այդ թվում՝ | 7415 | 6 752 000 | 6 752 000 | X | 6 752 000 | 6 752 000 | X | 1 215 859 | 1 215 859 | X |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | 4 100 000 | 4 100 000 | X | 4 100 000 | 4 100 000 | X | 1 103 859 | 1 103 859 | X |
| 1334 | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | | 2 652 000 | 2 652 000 | X | 2 652 000 | 2 652 000 | X | 112 000 | 112 000 | X |
| 1340 | 3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (տող 1341 + տող 1342+ տող 1343) այդ թվում՝ | 7421 | 5 363 300 | 5 363 300 | X | 5 363 300 | 5 363 300 | X | 1 071 420 | 1 071 420 | X |
| 1342 | Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | | 5 363 300 | 5 363 300 | X | 5 363 300 | 5 363 300 | X | 1 071 420 | 1 071 420 | X |
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352) այդ թվում՝ | 7422 | 34 350 000 | 34 350 000 | X | 34 350 000 | 34 350 000 | X | 7 640 813 | 7 640 813 | X |
| 1351 | Տեղական վճարներ | | 34 350 000 | 34 350 000 | X | 34 350 000 | 34 350 000 | X | 7 640 813 | 7 640 813 | X |
| 1352 | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | | 0 | 0 | X | 0 | 0 | X | 0 | 0 | X |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1360 | 3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից (տող 1361 + տող 1362+տող 1363) այդ թվում՝ | 7431 | 0 | 0 | X | 0 | 0 | X | 39 120 | 39 120 | X |
| 1361 | Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | | 0 | 0 | X | 0 | 0 | X | 39 120 | 39 120 | X |

Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան

Ֆին. բաժնի պետ՝ Հ. Միրզոյան

# Հաշվետվություն

## Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ

## (02/01/17 - 31/03/17թ. ժամանակահատվածի համար)

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդվածի համար | Տարեկան հաստատված պլան Ընդամենը (ս.5+ս.6) | Տարեկան հաստատված պլան այդ թվում վարչական մաս | Տարեկան հաստատված պլան այդ թվում ֆոնդային մաս | Տարեկան ճշտված պլան Ընդամենը (ս.8+ս.9) | Տարեկան ճշտված պլան այդ թվում վարչական բյուջե | Տարեկան ճշտված պլան այդ թվում ֆոնդային բյուջե | Փաստացի Ընդամենը (ս.11+ս.12) | Փաստացի այդ թվում վարչական բյուջե | Փաստացի այդ թվում ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300) այդ թվում |  | 357 613 900 | 357 613 900 | 0 | 357 613 900 | 357 613 900 | 0 | 87 097 827 | 87 097 827 | 0 |
| 1100 | 1.ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160) այդ թվում` | 7100 | 63 766 600 | 63 766 600 | X | 63 766 600 | 63 766 600 | X | 15 771 415 | 15 771 415 | X |
| 1110 | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112) այդ թվում` | 7131 | 7 820 600 | 7 820 600 | X | 7 820 600 | 7 820 600 | X | 2 908 833 | 2 908 833 | X |
| 1111 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար |  | 3 620 600 | 3 620 600 | X | 3 620 600 | 3 620 600 | X | 1 827 196 | 1 827 196 | X |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար |  | 4 200 000 | 4 200 000 | X | 4 200 000 | 4 200 000 | X | 1 081 637 | 1 081 637 | X |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից այդ թվում` | 7136 | 41 760 000 | 41 760 000 | X | 41 760 000 | 41 760 000 | X | 9 546 472 | 9 546 472 | X |
| 1121 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար |  | 41 760 000 | 41 760 000 | X | 41 760 000 | 41 760 000 | X | 9 546 472 | 9 546 472 | X |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1130 | 1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ այդ թվում` | 7145 | 7 986 000 | 7 986 000 | X | 7 986 000 | 7 986 000 | X | 1 834 510 | 1 834 510 | X |
| 1131 | Տեղական տուրքեր (տող 1132 + տող 1137 + տող 1139 + տող 1140 + տող 1142 + տող 1143 + տող 1144+տող 1145+ տող 1147) այդ թվում` | 71452 | 7 986 000 | 7 986 000 | X | 7 986 000 | 7 986 000 | X | 1 834 510 | 1 834 510 | X |
| 1132 | ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար | | 180 000 | 180 000 | X | 180 000 | 180 000 | X | 45 000 | 45 000 | X |
| 1137 | դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում` ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար | | 3 032 000 | 3 032 000 | X | 3 032 000 | 3 032 000 | X | 249 500 | 249 500 | X |
| 1139 | զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար | | 1 500 000 | 1 500 000 | X | 1 500 000 | 1 500 000 | X | 525 300 | 525 300 | X |
| 1140 | է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար | | 212 000 | 212 000 | X | 212 000 | 212 000 | X | 20 500 | 20 500 | X |
| 1142 | թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար | | 2 760 000 | 2 760 000 | X | 2 760 000 | 2 760 000 | X | 925 210 | 925 210 | X |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1145 | ժբ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար | | 50 000 | 50 000 | X | 50 000 | 50 000 | X | 25 000 | 25 000 | ) |
| 1147 | ժդ) Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար | | 252 000 | 252 000 | X | 252 000 | 252 000 | X | 44 000 | 44 000 | ) |
| 1160 | 1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ այդ թվում՝ | 7146 | 6 200 000 | 6 200 000 | X | 6 200 000 | 6 200 000 | X | 1 481 600 | 1 481 600 | ) |
| 1161 | Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր (տող 1162 + տող 1163 ) այդ թվում՝ | | 6 200 000 | 6 200 000 | X | 6 200 000 | 6 200 000 | X | 1 481 600 | 1 481 600 | ) |
| 1162 | ա) Քաղաքաց. կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկն. վկայական-, քաղաքացի. կացության ակտերում կատարված գրառում-ում փոփոխություն-ը, լրացում., ուղղումներ կատարելու և վերականգ. կապակցությամբ վկայական-ը տալու համար | | 3 700 000 | 3 700 000 | X | 3 700 000 | 3 700 000 | X | 868 000 | 868 000 | ) |
| 1163 | բ) Նոտար. գրասենյակների կողմից նոտար. ծառայություն. կատարելու, նոտար. կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար | | 2 500 000 | 2 500 000 | X | 2 500 000 | 2 500 000 | X | 613 600 | 613 600 | ) |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260) այդ թվում՝ | 7300 | 247 382 000 | 247 382 000 | 0 | 247 382 000 | 247 382 000 | 0 | 61 359 200 | 61 359 200 | ( |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258) որից՝ | 7331 | 247 382 000 | 247 382 000 | X | 247 382 000 | 247 382 000 | X | 61 359 200 | 61 359 200 | ) |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1251 | ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | | 241 516 800 | 241 516 800 | X | 241 516 800 | 241 516 800 | X | 60 379 200 | 60 379 200 | X |
| 1257 | գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 5 865 200 | 5 865 200 | X | 5 865 200 | 5 865 200 | X | 980 000 | 980 000 | X |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390) այդ թվում՝ | 7400 | 46 465 300 | 46 465 300 | 0 | 46 465 300 | 46 465 300 | 0 | 9 967 212 | 9 967 212 | 0 |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334) այդ թվում՝ | 7415 | 6 752 000 | 6 752 000 | X | 6 752 000 | 6 752 000 | X | 1 215 859 | 1 215 859 | X |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | 4 100 000 | 4 100 000 | X | 4 100 000 | 4 100 000 | X | 1 103 859 | 1 103 859 | X |
| 1334 | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | | 2 652 000 | 2 652 000 | X | 2 652 000 | 2 652 000 | X | 112 000 | 112 000 | X |
| 1340 | 3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (տող 1341 + տող 1342+ տող 1343) այդ թվում՝ | 7421 | 5 363 300 | 5 363 300 | X | 5 363 300 | 5 363 300 | X | 1 071 420 | 1 071 420 | X |
| 1342 | Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | | 5 363 300 | 5 363 300 | X | 5 363 300 | 5 363 300 | X | 1 071 420 | 1 071 420 | X |
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352) այդ թվում՝ | 7422 | 34 350 000 | 34 350 000 | X | 34 350 000 | 34 350 000 | X | 7 640 813 | 7 640 813 | X |
| 1351 | Տեղական վճարներ | | 34 350 000 | 34 350 000 | X | 34 350 000 | 34 350 000 | X | 7 640 813 | 7 640 813 | X |
| 1352 | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | | 0 | 0 | X | 0 | 0 | X | 0 | 0 | X |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1360 | 3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից (տող 1361 + տող 1362+տող 1363) այդ թվում` | 7431 | 0 | 0 | X | 0 | 0 | X | 39 120 | 39 120 | X |
| 1361 | Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | | 0 | 0 | X | 0 | 0 | X | 39 120 | 39 120 | X |

Համայնքի ղեկավար` Գ. Սահակյան

Ֆին. բաժնի պետ` Հ. Միրզոյան